

ԱՐԹՍԱՆԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՆԻ ԼԱԼԱՅԱՆԻ «ՎԱՐԱՆՊԱ»  
ՈՒՍՈՒՄՆԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ<sup>43</sup>

Արմեն Սարգսյան, Լիանա Սարգսյան

Բանալի բառեր՝ ազգագրություն, բանահյուսություն, բարբառ, հանդես, ժողովածու, ուսումնասիրություն, հոդված, տառադարձություն, խմբագիր, հեղինակ

Հայ ազգագրության պատմության մեջ աննախադեպ երևույթ էր 1896 թվականին նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանի՝ Շուշի քաղաքում հիմնադրած՝ Ազգագրական հանդեսը, որով էլ «հիմք դրվեց հետագա ժողովրդագիտական ուսումնասիրություն-ների համար» [1]: Կարծ ժամանակում հանդեսի շուրջն են համախմբվում անվանի մտավորականներ Մ. Աբեղյանը, Լենին, Ստ. Մալխասյանը, Հր. Աճառյանը, Թ. Թորամանյանը, Ե. Շահագիզը, Խ. Սամվելյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Վ. Փափազյանը, Գ. Լևոնյանը և շատ ուրիշներ, որոնք, նաև ակտիվ աշխատակցելով հանդեսին, տպագրում են ժողովրդագիտական մնայուն արժեքներ ներկայացնող իրենց ուսումնասիրություններն ու ժողովածուները: Լավ գիտակցելով իր նպատակի կարևորությունը, այն է՝ իրատարակել հայ ժողովորդին, նրա պատմությանը, տնտեսական դրությանը, մշակույթին վերաբերող նյութեր, եվրոպական բարձրագույն կրթություն ստացած և առաջավոր երկրների գիտությանը քաջատեղյակ Ե. Լալայանը իր ծերանարկությունը համարում է ոչ թե անհատական, այլ ամբողջ առաջավոր դասակարգի գործ. «Մենք չենք խոստանում հրաշքներ գործել, որովհետև այս ծերնարկութիւնն անհատական գործ չէ և սույն մինի տաղանդից չէ կախուած. ազգի ուսումնասիրութիւնն ամբողջ առաջաւոր դասակարգի գործն է. երբ ժողովուրդը սիրով կը բանայ իւր սիրտն ազգագրի առաջ, երբ վերջինս կը լուսանկարէ նրան իւր բոլոր ծշտութեամբ, երբ կամխակալ և կուսակցական զաղափարները չեն պղտորի ոչ չ ժողովրդի և ոչ հետագօսուղների միտքը, մեր հանդէսը կը դառնայ ժողովրդական կեանքի մի ծխնարիտ հայելի, մի շտեմարան...»[2]:

Պատահական չէ, որ հանդեսի առաջին համարը սկսվում է՝ «Համարուտ տեսութիւն հայ ազգագրութեան» բաժնով, որտեղ խմբագիրը, ըստ արժանակույն գնահատելով հայ ժողովրդի հոգեկան ու մտավոր կյանքն արտահայտող ուսումնասիրությունների հեղինակ-մատենագիրների աշխատանքը, առանձնահատուկ տեղ է հատկացնում ազգագրության առանձին գոհարների արժեքին, դրանց ուսումնասիրման և պահպանման անհրաժեշտությանը:

Հանդեսի խմբագրությունը շուտով տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ լուս են տեսնում երկրորդ և հաջորդ համարները: Ընդհանուր առմամբ 1896-2016 թթ. տպագրվում է հանդեսի 26 գիրք, որտեղ լավագույն ներկայացվում են հայ և առանձին ազգագրական շրջանների ազգագրական, բանահյուսական, բարբառագիտական, հնագիտական և տարաբնույթ այլ ուսումնասիրություններ, ժողովածուներ, նյութեր:

«Ազգագրական հանդեսի» հիմնադրումը և նրա առաջին գրքի լույս ընծայումը Շուշիի Մահտեսի Հակոբյանի տպարանում առանձնակի կարևորություն ունեցավ Արցախի և մասնավորապես Շուշիի հոգևոր կյանքում, որը 19-րդ դարի վերջին իր նշանակությամբ համարվում էր Անդրկովկասի երրորդ քաղաքը[3], և որտեղ բուռն վերելք էին ապրում հասարակական կյանքը, մշակույթը ու կրթությունը: Պատահական չէ, որ հենց Շուշիում, իր շուրջը համախմբելով Արցախի մի խումբ մտավորականների, Ե. Լալայա-

<sup>43</sup> Հոդվածն ընդունվել է 13.03.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ Ս.Աբրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նը գավառի տարբեր բնակավայրերից կարճ ժամանակում հավաքում է ազգագրական հարուստ նյութ, որն էլ խմբագրելով, լրացնելով և ամբողջացնելով Վարանդային վերաբերող տարբեր լեզուներով հրատարակված և արխիվային ձեռագիր նյութերով ու պաշտոնական վիճակագրական տեղեկություններով կազմված մի շարք այլուսակներով ու տախտակներով, «Վարանդա» ընդհանուր խորագրով հրատարակում է հանդեսի երկրորդ և երրորդ գրքերում[4]:

Բ գրքում տեղադրված ժողովածուի բաժինների մեջ մասի նյութերը հավաքել է Ե. Լալայանը: Որպես հեղինակներ են նշված նաև Լ. Արաբելյանը՝ «Ստատիստիկական տեղեկութիւններ» (Ծուշու ամբողջ գավառի նասին), Ղ. Տեր-Ղազարյանը՝ «Տնտեսական դրութիւն», Վ. Յ.-ն՝ «Տղաբերը և կնունք», Բ. Ա.-ն՝ «Ընտանեկան կեանք», Յ. Տեր-Հովհաննիսյանը՝ «Հիվանդութիւն և բժշկութիւն»:

Ժողովածուն սկսվում է «Մի երկու խոսք Վարանդայի պատմական անցեալի մասին» բաժնով[5], որտեղ տրվում է Վարանդա գավառի համառոտ պատմությունը, առանձին անդրադարձ է կատարվում Ամարաս վամբին:

«Վարանդայի տեղագրութիւնը»[6] բաժնում հեղինակը առանձին ենթաբաժիններով ներկայացնում է գավառի սահմանները, լեռները, դաշտերը, գետերը, լճերը, աղբյուրները, քարայրերը (Հունոտի կարան, Շմանեք, Ավանա կարան, Որվան կարան, Ծծաքարի կարան), կիման, բուսական և կենդանական աշխարհը, հանքերը, Ծուշի քաղաքը և նշանավոր գյուղերը (Ավետարանոց, Ծոշու գյուղ, Կյունի ճարտար, Սարուշեն, Վարազարուն, Նոր Թաղլար), նշանավոր վամբերը (Ամարաս, Ս. Գրիգորիս, Կուտսանաց անապատ, Ղևոնյանց անապատ, Եղիշա կուտի անապատ, Բոյի եղեց, Կարմիր եկեղեցի, Բողրիսանի վանք, Մավասի վանք, Ծոշկա վանք), նշանավոր բերդերը (Աղկաբերդ, Ղալին խութ, Բրդահինջին ղալա):

Ծուշի քաղաքի և ամրող գավառի մասին վիճակագրական լուրջ տեղեկություններ են տրվում «Ստատիստիկական տեղեկութիւններ» (Ծուշու ամբողջ գավառի մասին)՝ [7] բաժնում: Ուշագրավ են 1886 և 1895 թթ. բնակչության թիվը և խոտությունը, բնակչությունն ըստ ազգությունների և դաշտանության թիվը և խոտությունը, բնակչության ըստ գավառում, ինչպես նաև բնակչության շարժը՝ ամուսնությունները, ծնունդները, մահացությունը, հայ բնակչության աճը, ներկայացնող այլուսակներն ու համապատասխան վերլուծությունները:

Ծավալուն և բովանդակալից է «Տնտեսական դրութիւն»[8] բաժինը, որտեղ հանգամանորեն ներկայացվում է Վարանդայի բնակչության տնտեսական զբաղմունքը՝ երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, շերամապահությունը, մեղվարությունը, ձկնորսությունը, որտորությունը, արհեստները, գործարանային արդյունաբերությունը, առևտուրը՝ ամերաժեշտ այլուսակներով:

Հաջորդ՝ «Լուսաւորութիւն» բաժնում[9] Ե. Լալայանը անդրադարձում է դպրոցներին, գրադարաններին, պարբերական հրատարակություններին, թատրոնին, տպարաններին, ոճրագործությանը, փոստիմ՝ քննության արդյունքները ներկայացնելով տարբեր այլուսակներով:

«Ընտանեկան բարք» խորագիր տակ առանձին բաժիններով՝ «Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ»[10], «Տղաբերը և կնունք»[11], «Ընտանեկան կեանք»[12], «Հիվանդութիւն և բժշկութիւն»[13], «Մահ, թաղումն և մերկլոց»[14], «Հոգու և հանդերձեալ կեանքի մասին»[15], հանգամանորեն լուսաբանված են ընտանեկան բարքերն ու ժեսերը: Ամուսնությունը և հարսնական սովորությունները քննելիս հեղինակը առանձին ենթաբերագրերի տակ անդրադարձում է այնպիսի ծեսերի ու երևոյթների, ինչպիսիք են՝ օրորոցի նշանադրությունը, շալակի նշանադրությունը,

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ծաղկագարողի նշանադրությունը (բարգահ), օջախի պսակը, թոնրի պսակը, առևանգմամբ ամուսնությունը, գնմամբ ամուսնությունը, լեզիրան, ծախսը, աղջիկ ուզելը, նշանդրեքը, խոնչա տանելը, հղե կտրելը, տղատըմաղը, քավորը, հանդերձօրինեքը, սափրելու ժեսը, հարսնար գնալը, փղեթօրինեքը, պսակ գնալը, հարսի օժիտը, հարս տանելը, մեժարքը, մկրկոչնքը:

Ընտանելյան կյանքը նկարագրելիս վերուծության են ենթարկվում նահապետական ընտանիքի բարքերը, տրվում են ազգակցության աստիճանները, անդրադարձ է կատարվում նաև բարոյականությանը. նշվում են նահապետական բարքերի ու բարոյական ըմբռնումների անկման պատճառները, որոնցից են պանդխությունը, երկրի դիրքը, գործարանները, գորքը և այլն:

«Հիվանդութիւն և բժշկութիւն» բաժինը ներկայացնում է գավառում տարածված մի շարք հիվանդություններ՝ ականջի վշտոց, աչքացավ, անքնություն, արյունահոսություն, այսուութոց, ատամնացավ, այրված մարմին, բարակացավ, բերանիարենք, օլիսացավ, լուծ, խավարսն, խոլերա, խլություն, կատաղած շան կծած, կողքի ծակոց, կորված մաշկ, կապույտ վերք, հազ, հարբուխ, միզակապություն, մատնաշունչ, մազոլ, մոլորոր, ուսկրպեկ, ուսների քրտինք, գնդակի վերք, տաքություն, ցավ տված մկանուք, փայծաղություն մեծանալը, փորացավ, փորկապություն, օժի թույն, և դրանց բուժման ժողովրդական միջոցներն ու հիվանդությունների տարածման հիմնական պատճառները:

Համառոտ տրվում են նաև մահվան և թաղման հետ կապված ժեսերը, հոգու և հանդերձայլ կյանքի մասին ժողովրդի պատկերացումները:

Աշխատության մեջ ամենաընդարձակը «Հավատք» բաժինն է, որտեղ Ե. Լալայանը առանձին ենթարաժիններով քննության է առնում լեռների, քարերի, կրակի, ջրի, ժառերի, կենդանիների, լուսավորների պաշտամունքի ծմերը, անդրադարձում նաև քաջքերին և սատանաներին, կախարդությանն ու սնուտիապաշտություններին:

Աշխատության երկրորդ մասի[16] հեղինակը նույնական է, ով ուսումնասիրության համար, ինչպես նշում է, բացի իր հավաքած կյութերից, օգտագործել է Ալլահվերդյանի, Վարդապետյանի, Հովհաննիսյանի և ուրիշների՝ տարբեր գյուղերից հավաքած կյութերը[17]: «Լշանաւոր տօներ» խորագիրը կրող այս բաժնում ամենայն մանրամասնությամբ քննության են առնված 19-րդ դարի վերջին Վարանդայում տարածված սուները՝ նոր տարի, Ծնունդ և ջրորիներ, Սուլր Սարգիս, Բարեկենդան, Տյառնընդառաջ, Մեծ պաս, Շաղկագարդ, Չարչարանաց շաբաթ, Չատիկ, Համբարձում, Լուսավորչի պաս, Վարդապատ, Նավասարդ, դրանց հետ կապված զանազան ժեսերը, կերակրատեսակները, խաղատեսակները և այլ հանգանաքներ:

Կարևոր նշանակություն ունեն նաև աշխատության մեջ ընդգրկված լուսանկարները՝ «Ծուշի», «Ծուշեցի հայ կինն ու իր թոռը», «Ծուշեցի այան ու հարսը», «Ծուշեցի կինը փողոցում», «Մոլլան ազան տալիս», «Ձենքեր», «Ծուշու ջրկիր», «Վարանդեցի հայ գեղջկուիի», «Վարանդեցի հայ կին», որոնք հիմնականում ունեն ազգագրական բնույթ և այդ ժամանակաշրջանի եղակի նույշներից են:

19-րդ դարի երկրորդ կեսին դեռևս բանագիտությունը առանձնացված չէր որպես արանձին գիտություն: Թերևս դրանով պետք է բացատրել, որ ժամանակի մի շարք ուսումնասիրություններում և ժողովածուներում (այդ թվում՝ «Ազգագրական հանդեսում») տպագրված բանականության նյութերը ներկայացվում են ազգագրականի հետ միասին: Նման բազմաթիվ նյութերը են ընդգրկված նաև ,Վարանդա ժողովածուներ[18], որտեղ հեղինակները տարբեր բաժիններում այս կամ այն երևույթը նկարագրելիս հաճախ են անդրադարձել դրանց հետ կապված ժողովրդական ստեղծագործություններին՝ հիմնականում գրառված Ղարաբաղի բարբարով՝ ժամանակի գիտա-

## ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

կան տարադարձությամբ: Առատ են ասույթային բանահյուսության նմուշները, որոնք հիմնականում ընդգրկված են ընտանեկան բարդերի ու ծեսերի նկարագրություններում: Դրանց մեջ հաճախ են հանդիպում բարեմաղթություններ ու օրինամքներ՝ «Բարով դու էլ մին տղա բիրիս...», «Ծէն կէնաս», «Հորով, մորով ու բախտաւոր զավակ լինի», «Աստոծ ձեզ պահի», «Թո շոքը ոչ պըկասի իմ գիշան...», անեծքներ՝ «Թու հոր տոնը պիրիշակ մնա», «Թու մոր մադարը կտրե, որ քեզ նմանը ինձանու քցից», «Ծոխտ կտրե», «Պոչերդ կտորիմ», «Ծամերդ տրխտակին սանրիմ», «Ծծերավդ չանգալ ընկնիս», «Մին ծըկիս, հզգեր փըքիս», «Հանց օրի կյաս, օրին ծնընդկանը թընաշա կյանե, այլ բանաձևումներ՝ «Չոր տարեխ», «Քավար գըլխակեր», «Աստված, էնքան մեր խեցանը պահիս, չքօրիանը ես մեռնիմ, հարսին նան տղի ունուդ չընգնիմ» և այլն:

Հարսի և ընտանիքի մյուս անդամների փոխհարաբերություններն ու նրանցից յուրաքանչյուրի բարոյական նկարագիրն է բնութագրում «Ընտանեկան կեանք» բաժնում զետեղված չափածո ստեղծագործությունը[19], որտեղ հիվանդ հարսը աղերսական ծայնով դիմում է ընտանիքի անդամներին՝ մի գոյալ ջուր խնդրելով, սակայն ոչ մենքը չի կատարում նրա խնդրանքը («Ակեսուր, սկեսուր՝ սկսրիհան, Սերտս էրեց, մի գոյլ ջուր. Պատրոն, պատրոն, պտրիհան, Սերտս էրեց, մի գոյլ ջուր: Տեգրակին, տեգրակին՝ օծին ծակին, Սերտս էրեց, մի գոյլ ջուր. Նշանած, նշանած՝ Ըստընու խզզրիհանած, Սերտս էրեց, մի գոյլ ջուր»), մինչև ամուսինը գալիս և տալիս է ջուրը, որը խմելուն պես հիվանդը մեռնում է:

Այս բաժնում է ընդգրկված մեկ այլ չափածո ստեղծագործություն, որն ունի քնարական բնույթ և ներկայացնում է սիրահար զոյգի զուգերզը[20]: Երգը սկսում է տղան՝ Սարերը ծինը կոյսալ ա, Քարիհա, ես հունց կյամ: Փողոց, փողոց պղնձի ա, Քարիհա, ես հունց կյամ: Կտոր, կտոր լուսնունկյա ա, Քարիհա, ես հունց կյամ: Զեր պառավը մըլթմըրթում ա, Քարիհա, ես հունց կյամ: Զեր շոնը հաշմաշում ա, Քարիհա, ես հունց կյամ: Զեր դիոռնը ճռճռում ա, Քարիհա, ես հունց կյամե, որին աղջիկը պատասխանում է՝ «Սարերը ծինը կոյսալ ա, Կանանչ թըլավ եկ: Փողոց, փողոց պղնձի ա, Լեն կըրմնջավն եկ: Կտոր, կտոր լուսնունկյա ա, Ծառն շոքավը եկ: Սեր պառավը մըլթմըրթում ա, Ետնուց դըլվավն եկ: Սեր շոնը հաշմաշում ա, Պատարը քցի, եկ: Սեր որցակը ծկլթում ա, Կոտան քցի, եկ: Սեր դունը ճըլվուտում ա, Տափանը երե, եկ»:

Վարանդայում ժամանակին լայնորեն տարածված էին ավանդությունները, որոնց մի մասը տեղ է գտել ժողովածուում, մասնավորապես «Հավատք»[21] խորագրի տակ ընդգրկված նյութերում, որտեղ ներկայացված են տարբեր լեռների, բարերի, ժայռերի, կրակի, ջրի, ծառերի, թռչունների, կենդանիների, երկնային լուսատուների, երևույթների, քաջքերի, սատանաների, սրբավայրերի և մասին եղած տասնյակ ավանդություններ:

Այստեղ կան նաև որոշ աղոթքներ, ինչպես՝ «Գնացի Երուսաղեմ, տեսս մին ծառնը, եռ ծառիցը դուրս էկավ մին ճյողնը, Ընդրանից դուրս էկավ մին ուրիշ ճյողնը, Ընդրանից դուրս էկավ մին ուրիշ ճյողնը, «Ուրանձի ճյողնիցը կախվեց մին ոչխար, Մոտըլկացի, բռնեցի, Անտենակ մորթեցի, Անջուր լվացի, Անկրակ եփեցի. Ես կերի՝ սրտմնա չի, Դու իսե սրտմնա իս ըլալ»:

Հարկ է նշել, որ Ա. Նազինյանի խմբագրությամբ, Վարանդան ժողովածուն՝ լեզվական, քերականական, ոճական որոշ անհարթությունների, բացթողումների ու վրիպակների ճշգրտմամբ ու լրացմամբ, «Ազգագրական հանդեսում» տպագրված «Գանձակի գավառ նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար» ժողովածուի հետ «Արցախ» խորագրով վերահրատարակվել է 1988թ.՝ կազմելով Շ. Լալայանի երկերի հինգհատողյակի 2-րդ հատորը[22]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Խեմչյան Է., ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները), «Շուշին հայոց քաղաքակրթության օրորան. Շուշիի ազգատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Եր., 2007, էջ 343;
2. «Ազգագրական հանդես», Շուշի, 1896, Ա գիրք, էջ 5:
3. Հայութ Կարաբախ (историческая справка), Ер., 1988, стр. 83
4. Լալայան Ե., Վարանդա. Նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 5-244, Վարանդա, նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1898, Գ գիրք, էջ 338-349
5. Բ գիրք, էջ 5-8:
6. Նույն տեղում, էջ 9-53:
7. Նույն տեղում, էջ 54-76:
8. Նույն տեղում, էջ 77-101:
9. Նույն տեղում, էջ 102-112:
10. Նույն տեղում, էջ 113-144:
11. Նույն տեղում, էջ 144-150:
12. Նույն տեղում, էջ 151-172:
13. Նույն տեղում, էջ 173-178:
14. Նույն տեղում, էջ 178-184:
15. Նույն տեղում, էջ 185-186:
16. Գ գիրք, էջ 338-349:
17. Նույնը, էջ 349:
18. Մանրամասն տե՛ս Վարդանյան Ս., Վարանդայի բանավոր մշակույթը Ե. Լալայանի և նրա թղթակից բանահավաքների գրառումներում, Լրաբեր հասարակական գիտություններին, Եր., 2015, N2, էջ 356-367:
19. Բ գիրք, էջ 156:
20. Նույն տեղում, էջ 171-172:
21. Նույնը, էջ 187-244:
22. Լալայան Ե., Երկեր հինգ հատորով, Եր., 1988, հ.2:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արցախի ազգագրությունը Երվանդ Լալայանի «Վարանդա» ուսումնասիրության մեջ  
Արմեն Սարգսյան, Լիանա Սարգսյան

Հոդվածում քննության է առնվում Ազգագրական հանդեսին Բ և Գ գրքերում Ե. Լալայանի խմբագրությամբ հրատարակված «Վարանդա» ժողովածուն, որտեղ տրված է Արցախի Վարանդա գավառի 19-րդ դարավերջի ազգագրական ամբողջական նկարագիրը: Ուշադրություն է դարձվում նաև ուսումնասիրության մեջ ընդգրկված բանահյուսական նյութերին ու լուսանկարներին, որոնք հիմնականում ունեն ազգագրական բնույթ:

**РЕЗЮМЕ**

**Этнография Арцаха в работе Ерванда Лалаяна "Варанда"  
Армен Саркисян, Лиана Саркисян**

**Ключевые слова:** этнография, фольклор, диалект, журнал, коллекция, исследование, статья, транскрипция, редактор, автор.

В статье рассматриваются материалы из сборника "Варанда" Е. Лалаяна, напечатанные в изданиях Б и Г журнала "Азгагракан андес", в которых дана общая этнографическая характеристика провинции Варанда к концу XIX-го века. Уделяется внимание также фольклорному материалу и фотографиям, которые имеют в основном этнографическую сущность.

**SUMMARY**

**On Analysis Of Artsakh Ethnography In Ervand Lalayan's "Varanda"**

**Armen Sargsyan, Liana Sargsyan**

**Keywords:** ethnography, folklore, dialect, journal, collection, research, article, transcription, editor, author.

The article analyses "Varanda" collection printed by E. Lalayan in "Azgagrakan handes" (B and G editions), where the total ethnographic description of the 19th century Varanda, Artsakh province, is introduced. Special attention is also paid to folklore materials and photographs, which have ethnographic essence.